ՎԱՐԴԱՎԱՌ

Սիրելի Հայորդի, այս Կիրակի Վարդավա՛ռ է, մեր ազգային քրիստոնեության լուսափառ և հրաշափառ տոնը։

Վարդավառ շատ սիրուն և շատ գեղեցիկ պատմություն մը ունի հայ ժողովրդյան մեջ և մեզ կհիշեցնե՝ մեր ազգային կյանքին հին շրջաններեն մին, առույգ, կենսավետ, շենշող շրջաններեն մին։

Կարժե երբեմն թոթափել կյանքի վրա ճնշող ծանրությունները և վերանալ, վերանալ, խորասուզվելու համար մեր ազգային պատմության ավանդությանց մեջ։ Ասիկա մեծապես կը նպաստե մտքի նորոգության և հոգեկան անուշ թեթևություն մը կուտա։

Շատ սիրելի է ինձ Վարդավառ, որ ինչպես ամեն հայու, նույնպես ինձի կը կհիշեցնե մանկությանս զվարթությունները, մեր ազգային տոնական խնձիղներն ու խրախճանքները.— մեր ցեղին կենդանության անկորչնելի գաղտնիքը։

Քրիստոնյա Հայաստան ծայրե ի ծայր, և ամեն հայ քրիստոնյա ամեն տեղ, մեր Փրկչին պայծառակերպության վերածյալ այդ Ավետարանական նշանավոր դեպքին և Դասին մեջ կը վերակենդանացնեն մեր նախնյաց Վարդավառը, ջուրերու սրսկումներով և տեղ-տեղ ալ աղավնիներու թռուցմամբ։

Երիտասարդությունը, հա՛յ երիտասարդությունը կհավաքվեր հայ տան բակը, ազգականական և բարեկամական սերտ կապերու շրջանակին մեջ։ Ամենքն ալ ուրախ զվարթ։ Տարիքի բերմունք, տոնախմբության հորդորմունք իրարու ղուգված, կը հրաշակերտին ցնծալու և խաղալու իրավունքը մեր ցեղին մեջ, պարմանիներու խանդով ե նոանգով։

Հայոց աղջիկներ, Հայոց Աստղիկներ, իրենց Ազգին հին դիցուհվոյն ամենամաքուր աշխուժությամբ, իրենց ներշնչող անմեղություններով, կկենդանացնեին Հայության հին հավատքին զվարթ հուշքերը։

Սիրելի Հայորդի, մեր ազգը այդ ցնծություններեն ալ զրկվեցավ անցնող չորս հինգ տարիներու ընթացքին, բայց վաղը պիտի վերստանա՝ իր կորուստներուն գինը՝ մեծմեծ տոկոսներով։

Եվ ճիշտ այս պատճառով իսկ կարժե որ մեր Ազգին պատմական ավանդությանց քողը վերցնենք պահ մը, Վարդավառի տոնին առթիվ, մեր Ավետարանական դասերուն սկիզբը և վերածնելու Հայաստանի մը իրականացման դաղափարին առջև։

Վարդավառ կամ Փրկչին պայծառակերպության Տոնը, Հայաստանի Եկեղեցվոյն Հինգ Տաղավարներեն Երրորդն է, և զոր տոնախմբելու համար Հայք շաբաթ մը հոգևոր պատրաստություններ կը տեսնեին, պահոք և աղոթիվք։ Եվ տոնը փառավորելու համար՝ անոր Նավակատիքը, այսինքն՝ Շաբաթ օրը նվիրված են Եկեղեցու տոնին, որ խորհրդավորված է Հին Ուխտի Տապանակին հիշատակով և նոր Եկեղեցու հիմնարկությամբ։ Երկուշաբթի օրը նվիրված է Մահելոց յիշատակին։— Վարդավառի տոնը Եկեղեցու մեջ

կ՝երկարի մինչև Երեքշաբթի, մեր Շնորհալի Հայրապետին կարգադրությամբ։ Անկե առաջ, մեկ օր էր Վարդավառի տոնախմբությունը։

Վարդավառ Հայոց հին հավատքին (հեթանոսության) մեջ տոնն է ԱՍՏՂԻԿ դիցուհվոյն։

Աստղիկ՝ հույն դիցաբանության մեջ նույն է Ափրոդիտեի, այսինքն հաճույքի, փափկության և հեշտության դաղափարին և դիցուհու հետ։

Իսկ Հայոց մեջ բոլորովին հակառակն էր. ինչպես Անահիտ Տիկինն Հայաստանի և Վահագն, նույնպես և Աստղիկ, ի սկզբան կը մարմնացնեին պարկեշտության, մաքրության դաղափարը. բայց երբ հույն պանթեոնի անպարկեշտ դիրքերեն, զոր օրինակ, Հերակլես և Ափրոդիտե ներմուծվեցան հայ մեհեաններու մեջ, Հերակլեսը նույնացավ Վահագնի հետ, իսկ Ափրոդիտեն՝ Աստղկան հետ։

Աստղկան և Վահագնի գլխավոր կամ կենտրոնական մեհեանը կգտնվեր Աշտիշատ (Մուշ) Սենյակ Վանագնի անունով։ Իսկ Մշո կամ Տարոնո աշխարհին մեջ մեկե ավելի լեռնային հանգստավայրեր ուներ Աստղիկ, որոնց հավատարիմ հիշեցուցիչներն են այժմ Աստվարեղ կոչված ամրոցները։

Հայը վարդ կնվիրեին Աստղկան, իր տարեկան աշխարհախումբ տոնին առթիվ, կամ վարդի պսակներով կվառեին հայ դիցուհվոյն արձանը, որմէ մնացած է հայ լեզվի և գրականության մեջ ՎԱՐԴԱՎԱՌԸ, պատմական և գեղեցիկ բարդ բառ։— Վարդաձգի և Վարդամատն բանաստեղծական բառերն ալ ստորոգելիներն են Աստղկան։

Հին Հայոց առաջին տոնն էր Վարդավառը՝ Նավասարդին, այսինքն հայկական տարեգլխին առաջին ամսվան սկիզբը, որ կը զուգադիպի օգոստոս ամսին։

Աստղկան տոնին տեղ Ս. Գրիգոր Լուսավորիչ հաստատեց Փրկչին Պայծառակերպության տոնը, առանց խափանելու տոնին անունը և այդ առթիվ կատարված ազգային և աշխարհային հանդիսությունները։

Վարդավառին կապված էր նաև Ջրհեղեղի հիշատակն ալ։

Հայ հեթանոսության մեջ բնության այլաղան երևույթներ առարկա եղած են պաշտամունքի և երկյուղած հարգանաց։

Լեռներ, դետեր, աղբյուրներ, ծառեր, և այլն, որոնց հետքերն ու շոշորդները մինչև ցարդ մնացած են մեր ազգին մեջ։

Երասխ և Եփրատ դետեր՝ սրբազան և պատվելի էին Հայոց մեջ։

Ջրհեղեղը, որուն նկարագրությունը կը գտնենք Ս. Գրոց մեջ, հեթանոս Հայաստանի մեջ ալ պահեց իր հիշատակը։

Ինձ կը թվի թե Վարդավառի նավակատիքը, Շարաթ օրը, ավելի մեծ հարմարությամբ ու խորհրդով, Նոյան Տապանի հիշատակին նվիրված պիտի ըլլար, քան թե Տապանակ Ուխտին, որ որևէ կապ և առնչություն չունի Ջրհեղեղի պատմության հետ, մինչ Նոյան Տապանը կամ Տապանակը, անմիջական կապ ունի Ջրհեղեղի հետ, և Հայ-ազգային ավանդությունը կկուրգուրա Նոյան Տապանին վրա, իբրև երկնային շնորհի մը վրա, որ իբր աւանդ արված է Հայ ազգին։

Նոյան Տապան, իբրև նախատիպ Եկեղեցու, ապրեցուցիչը եղավ ընտրյալներուն, ինչպես որ բուն Եկեղեցին ալ ապրեցուցիչ, այսինքն՝ ազատիչ կամ փրկիչ պիտի ըլլար հավատացյալներուն։

Նավասարդ—որ կը նշանակե Ամանոր, Նոր Տարի—հին Հայոց համար ամի՛սն էր աշխարհախումբ, ազգային տոնակատարությանց և Ս. Գրիգոր Լուսավորիչի և հայրենասերն Տրդատի կարգադրությամբ՝ այդ տոներ փոխանակվեցան քրիստոնեական նշանավոր տոներով, որոնցմե Վարդավառը պահեց իր անջնջելի հետքերն ու հուշքերը մեր ազգային բարքերու և սովորությանց մեջ։

Հետաքրքրակա՛ն է հիշել և հիշեցնել թե տեղտեղ, Հայոց մեջ Ցատրվան կըսեն փոխանակ Վարդավառի։ Ուրիշ ազգերու շարքին՝ Պարսիկներն ալ ունին ջրախաղի կրոնական հանդեսը, որ կը կոչվի Ասլրիյզնկյան։

Սիրելի Հայորդի, այս բոլոր պատմությունները, ավանդությունները, առասպելները հետաքրքրական են։

Ատոնք մեզ կփոխադրեն հին ժամանակների մտքի աշխարհները։

Հին կրոնքը, իր ներքին և արտաքին արժեքով զարդարած էր ազգակ մը ըլլալե մարդոց ազնվացման։

Հայաստանի մեջ շուտով դիտվեցավ այս իրողությունը. և Ս. Գրիգոր Լուսավորիչ կարող եղավ հասկացնել այդ իրողությունը Հայոց անվանի թագավորին, Մեծն Տրդատա, և երկուքը միասին և միաշունչ ձեռնարկեցին գործի. և հին, ավերված ապականված գրության մը տեղ բերին նորոգիչ և կենդանացուցիչ լույսը։— Ձեռնարկեցին և հաջողեցան։

Փրկչին պայծառակերպության կամ այլակերպության լո՛ւյսն է այդ, Ավետարանին լույսը, որ փարատեց Հայաստանի ոլորտներեն տգիտության թարձրամած խավարը։

Մեր Ազգն սիրեց այդ լույսը, և այդ լույսով ապականության տեղ նկավ կյանք,—

գործող մտքի, կենդանի հավատքի կյանքը։ Այդ լույսը մեր ազգին տվավ Շողակաթը, Էջմիածինը, Հայերեն այբուբենը, Հայերեն Ս. Գիրքը,— Ավետարանին կենդանի և կենդանացուցիչ կյանքն ու կենցաղը, որուն ապացույցներն ու փաստերը իրենց արյամբ տվին Հայոց նահատակները՝ Կույսն Սանդուխտեն մինչև 1915-ի արիացյալները, ամեն չափե և հասակե, և այսպես՝ մահվան անապատներուն մեջ հնչեցուցին հայ-քրիստոնեության անլռելի բարբառն ու փառքը։

Հայ քերթող մը այսպես կը մեկնե Փրկչին պայծառակերպությունը։

— «Իբր զի Փրկիչն մեր յայսմ աւուր ի խոնարհն տեսլեն մարմնոյ իւրոյ՝ փոխեցաւ յայլ կերպարան փառաց ամենալոյս պայծառութեամբ դիմացն եւ հանդերձից»։

Մենք ամենքս ալ պետք ունինք պայծառակերպության։ Փրկչին պես պարտինք վերանալ կենցաղի սովորական վիճակներեն, և մերձենալ առ Աստված, լուսո Հորն, գիտությամբ և գիտակցությամբ։

Այն ատեն յուրաքանչյուր հայ-քրիստոնեի դեմքը պիտի լուսավորվի։ Հոգիներ ինքնին պիտի ճառագայթեն իրենց էութենեն և պիտի մաքրագործեն կյանքը, և պիտի գեղեցկացնեն դայն։

(Դասեր Աւետարանէն, 1936, էջ 127—135)։

Ա՛յս է. սիրելի հայորդի. Ավետարանին դասը այսօր։

Եվ ի՞նչ ասկե ավելի խորհրդավոր և ասկե ավելի կենսական. մեր նոր հայրենիքի վերաշինության նավակատիքին մեջ։

Ամբողջ հայության համար Սուրբ Լեռն մըն է, Տավրոսեն Արարատ։ Այդ ահագին տարածության վրա հայ ազգը պետք է ցույց տա Ավետարանի ամենալույս պայծառությունը, փոխվելով իր անչքացած կյանքեն լուսանորոգ կյանքի մը։

Հայ ազգը ունեցավ իր պատմության մեջ պայծառակերպյալ դեմքեր. ինչպես որ տեսանք նախորդ դասին մեջ, Ազգային պայծառակերպությունները։

Այն արյունը, որ այդ հրաշքը գործեց Սուրբն Ղևոնդի և Սուրբն Վասակ Մամիկոնյանի երակաց մեջ, կրնա՞ քեզ ալ ոգևորել միևնույն սրբության հավատքով, և արիացնել քեզ, որպեսզի գիտակցությամբ բարձրանաս իմանալի Թաբորներու վրա։

Վարդավառ, եթե կը հոչակե և կը հիշեցնե մեզ մեր նախնյաց հավատքն ու կենցաղը, ան՝ նույն Վարդավառը՝ իր պայծառակերպյալ և ավետարանյալ իմաստով հարկ է որ խանդավառե մեզ այսօր ալ, վաղն ալ և հավետ, լույսի կյանքին մեջ։

ԲԱԲԿԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ